ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե : , ՀՀ, ՄԵԾԱՄՈՐ 671

Հեռախոս: 34441
Ֆաքս: 34441

Ելից ___

07 նոյեմբերի 2011թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Մեծամոր քաղաքային համայնքի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբեր ամսին ընդունած (թիվ 160-Ա մինչև 172-Ա) որոշումները և (թիվ 23-Ա) կարգադրությունը :

Առդիր ՝ 15 թերթ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1/Ք/10611-11
«08» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 172-Ա

28 հոկտեմբերի 2011 թ.

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր քաղաքի սոցիալական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովի առաջարկությունը և Մեծամորի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 09 նիստի «Մեծամորի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման 6 կետի .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի սոցիալապես անապահով 23 ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի :
2. Մեծամորի քաղաքային համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Ֆլորա Բավեյան/ կատարելու կանխիկ վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 28
Ք.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ

Արմավիրի մարզի Մեծամորի
քաղաքային համայնքի ղեկավարի
2011 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 172-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

հ/հ	անուն, ազգանուն	հասցե	գումարի չափը
1	Ներսիսյան Համազասպ	17-6	25000
2	Հովհաննիսյան Եղիազար	6-41	10000
3	Ռոստոմյան Մելանյա	2-26	10000
4	Հովհաննիսյան Լևիկ	21-38	10000
5	Ստեփանյան Արթուր	40-18	10000
6	Մկրտչյան Նարինե	2-48	10000
7	Կարապետյան Ռուդիկ	$2^{բ1}$-15	10000
8	Մուսայելյան Գրիգոր	6-48	10000
9	Գրիգորյան Միքայել	$2^{գ}$-2	5000
10	Այվազյան Լյուբա	ժ/Տ 3	5000
11	Արուտունով Արկադի	1-26	5000
12	Կարապետյան Լալա	9-37	5000
13	Ավետիսյան Քրիստինե	24-8	5000
14	Կարապետյան Աննա	$3^{բ}$-12	5000
15	Արզումանյան Անուշ	$8^{գ}$-10	5000
16	Պետրոսյան Սինոդ	7-8	5000
17	Գագիկյան Վոլոդյա	$6^{բ2}$-27	5000
18	Մկրտչյան Արմենուհի	18-41	5000
19	Հակոբյան Անահիտ	1-23	5000
20	Կնյազյան Սամվել	2բաղ. $3^{բ}$-6	5000
21	Աբրահամյան Մարգարիտա	$13^{ա}$-36	5000
22	Ավետիսյան Քրիստինե	24-8	5000
23	Մխիթարյան Մելանյա	16-14	5000
	ԸՆԴԱՄԵՆԸ		170000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 171-Ա

27 հոկտեմբերի 2011 թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշումներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի թիվ 40 շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Գևորգ Հարությունյանի կողմից համայնքային սեփականության 63.6 քմ հողամասի վրա ինքնակամ կառուցած ավտոտնակը համարել Մեծամոր քաղաքային համայնքի սեփականություն :
2. Նշված որոշմանը կցել հողամասի հատակագիծը՝ ինքնակամ կառույցի կառուցապատման մակերեսի չափով:
3. Ինքնակամ կառույցին տրամադրել . ք.Մեծամոր 1-ին թաղամաս N «40-3» հասցե:
4. Ինքնակամ կառուցած շինության վաճառքի իրավունքի նախապատվությունը տալ Գևորգ Հարությունյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 27
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 170-Ա

26 հոկտեմբերի 2011 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հրաչիկ Համբարձումյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրաչիկ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող խանութին / սեփ. վկայական N 2436765/ տրամադրել.

   քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս N« 13^{գ} - 1^{բ} / 1» հասցե:

2. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 26
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 169-Ա

26 հոկտեմբերի 2011 թվական

ՀԱՍՄԻԿ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33, 35 հոդվածների դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի առաջին մասի երկրորդ կետով և հիմք ընդունելով Աննա Աբգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի 1-ին թաղ. թիվ 28 շենքի , 23 բնակարանի բնակիչ Հասմիկ Սանոսյանի /ծնվ.1994 թվականի հունվարի 30-ին/ նկատմամբ սահմանել հոգաբարձություն:
2. Հասմիկ Սանոսյանի հոգաբարձու նշանակել հորեղբորը՝ Արսեն Սանոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 26
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 168-Ա

19 հոկտեմբերի 2011 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հրաչիկ Համբարձումյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրաչիկ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող խանութին / սեփ. վկայական N 1225896/ տրամադրել.

   քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս N« 13^{գ} - 1^{բ}» հասցե:

2. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 19
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 167-Ա

19 հոկտեմբերի 2011 թվական

ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի երրորդ մասով, 37 հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի առաջին մասի երկրորդ կետով և հիմք ընդունելով Անժելա Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի 1-ին թաղ. թիվ 6բ շենքի , 26 բնակարանի բնակիչ Սամվել Բաղդասարյանի /ծնվ. 2003 թվականի հունվարի 10-ին/ նկատմամբ սահմանել խնամակալություն:
2. Սամվել Բաղդասարյանի խնամակալ նշանակել քեռու կնոջը՝ Անուշ Ստեփանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 19
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 166-Ա

12 հոկտեմբերի 2011 թ.

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 2307-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մեծամոր քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի օգոստոսի 5-ի թիվ 25 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի սեփականությունը համարվող քաղաքապետարանի վարչական շենքից 98.6 քմ տարածք նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորական միության Մեծամորի տարածքային կազմակերպությանը:
2. Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորական միության Մեծամորի տարածքային կազմակերպության հետ սահմանված կարգով կնքել նվիրաբերության պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:
3. Շինությանը տրամադրել՝ քաղաք Մեծամոր վարչական կենտրոն N «1/2»հասցե:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ **Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2011 թվականի հոկտեմբերի 12
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 165-Ա

10 հոկտեմբերի 2011 թ.

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N. 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայկ Ալոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայկ Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող հացի արտադրամասին տրամադրել՝ քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս N «12-1» հասցե:
2. Որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 10
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 164-Ա

10 հոկտեմբերի 2011 թ.

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 02 փետրվարի 2007 թվականի N 88 որոշմամբ և հիմք ընդունելով Վահրամ Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի 32 շենքի 39 բնակարանի բնակիչ Վահրամ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփ.վկայական N 2852141) Մեծամոր քաղաքում գտնվող առևտրի և սպասարկման օբյեկտի գործառնական նշանակությունը փոխել, որպես բնակելի տան, իսկ զբաղեցրած 1200 ք/մ հողամասը փոխել, որպես տնամերձ հողամաս:
2. Կառույցին տրամադրել քաղաք Մեծամոր 3-րդ թաղ. N «1[4]» հասցե:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ *Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

2011 թվականի հոկտեմբերի 10
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 163-Ա

06 հոկտեմբերի 2011 թվական

ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 6-րդ կետով , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 2387 որոշումով և հիմք ընդունելով Սարգիս Գրիգորյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի թիվ 11 շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Սարգիս Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 60 քմ խանութը /սեփ. վկայական տրվ. 18.12.2007թ./ ընդլայնել 54 քմ-ով և հողատարածքը ուղակի վաճառքով օտարել նրան՝ 1 քմ 1914 դրամ կադաստրային արժեքով, որը կազմում է 103360 դրամ:

2. Հողամասին տրամադրել՝ քաղաք Մեծամոր, 1-ին թաղամաս N «11-3/1» հասցե:

3. Նախագծային աշխատանքները իրականացնել քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա :

4. Շինարարական աշխատանքները սկսել համապատասխան թույլտվությունը ստանալուց հետո:

5. Կառուցապատման նպատակով հատկացված հողամասը երեք տարվա ընթացքում չիրացնելու դեպքում կկիրառվեն համապատասխան միջոցներ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ *Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

2011 թվականի հոկտեմբերի 06
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 162-Ա

05 հոկտեմբերի 2011 թ.

ՄԵԾԱՄՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր քաղաքի սոցիալական վիճակն ուսումնասիրող հանձնաժողովի առաջարկությունը և Մեծամորի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 09 նիստի «Մեծամորի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման 6 կետի .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքի թիվ 6 շենքի թիվ 46 բնակարանի բնակիչ Սուրիկ Հակոբյանին հատկացնել դրամական օգնություն 30.000 /երեսուն հազար / դրամի չափով, առողջությունը վերականգնելու նպատակով:

2. Մեծամորի քաղաքային համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետին /Ֆլորա Բավեյան/ կատարելու կանխիկ վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 05
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 161 -Ա

05 հոկտեմբերի 2011 թ.

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 660-661 հոդվածների դրույթներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով Ասքանազ Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ասքանազ Ստեփանյանին ճանաչել Մեծամոր քաղաքի թիվ 25 շենքի 9 բնակարանի վարձակալ և տալ բնակարանային օրդեր :

2. «Մեծամորի բարեկարգում» Համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրինությանը /Վ.Հակոբյան/ Ասքանազ Ստեփանյանի հետ կնքել բնակարանի վարձակալության պայմանագիր և կատարելու համապատասխան հաշվառում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

05 հոկտեմբերի 2011 թվական
Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ 23-Ա

31 հոկտեմբերի 2011թ

ՌՈԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158, 159, 164, 167 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ աշխատավարձի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N1384–Ն որոշումը և Ռոբերտ Գրիգորյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավար Ռոբերտ Գրիգորյանին տրամադրել 2010 թվականի արձակուրդ 20 աշխատանքային օր տևողությամբ 2011 թվականի նոյեմբերի 3-ից:

2. Աշխատանքի մեջ համարել 2011 թվականի դեկտեմբերի 01-ից:

3. Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի լիազորությունների ժամանակավոր պարտականությունը դնել Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի տեղակալ՝ Սամվել Գալստյանի վրա:

4. Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ /Ֆլորա Բավեյան / կատարելու համապատասխան ձևակերպում:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 31

Ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ 160-Ա

04 հոկտեմբերի 2011 թվական

ԱՃՈՒՐԴ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի թիվ 290-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել Մեծամոր քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերից աճուրդ վաճառք՝
   1 / 609.4 քմ բնակավայրերի նշանակության հողամաս, 1 քմ հողամասի մեկնարկային գինը սահմանել՝ 2000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2011 թվականի հոկտեմբերի 04
Ք.Մեծամոր